ՀԱՎԵԼՎԱԾ
ՀՀ Վայոց ձոր մարզի Արենի համայնքի ավագանու
15.03.2023 թ-ի թիվ 27-Ա որոշման

# ՈՒՂԵՐՁ
## Հայաստանի Հանրապետության Վարչապետին և ՀՀ ԱԺ Նախագահին հղված

Սույն թվականի մարտի 9-ին Արենիհամայնքի ղեկավարին են դիմել «Արենիի ԱԱՊԿ» ՊՈԱԿ-ի տնօրենի ժ/պ Ասատուր Մկրտչյանը, «Մալիշկայի ԱԱՊԿ» ՊՈԱԿ-ի տնօրենի ժ/պ Գայանե Հարությունյանը, «Հռիփսիմե ԱԱՊԿ» ՊՈԱԿ-ի տնօրեն Չոյա Մարտիրոսյանը և «Աղավնաձորի ԱԱՊԿ» ՊՈԱԿ-ի տնօրենի ժ/պ Լարա Հարությունյանը՝ առաջարկելով ավագանու առաջիկա նիստի օրակարգում քննարկել ՀՀ Կառավարության 10.10.2019 թ.-ի թիվ 1425-Ն որոշումը և այդ որոշման հետ կապված վերոնշյալ կառույցների մտահոգությունները:

Դիմումի մեջ մասնավորապես նշվում է, որ ընդունված որոշումը սպառնում է Հայաստանի Հանրապետությունում ընտանեկան բժշկության մոդելին և կարող է բերել դրա փլուզմանը՝ հանգեցնելով ոլորտում լուրջ խնդիրների: Դիմումում նաև բերվում են վերլուծություններ, ըստ որոնց այս օպտիմալացումըոչ միայն չի նպաստելու առողջապահության ոլորտում պետության իրականացրած ծախսերի կրճատմանը և ֆինանսական խնայողություններին, այլև, ընդհակառակը, նպաստելու է ծախսերի ավելացմանը, հիվանդացության մակարդակի աճին և առողջապահության ոլորտի հանդեպ բնակչության վստահության մակարդակի անկմանը:

Վերոնշյալ հանգամանքներից բացի՝ Արենի համայնքի ավագանին ընդունում է, որ նման որոշման կայացումը հենց միայն Վայոց ձորի մարզում ինքնին խտրական վերաբերմունք է, և եթե որոշակի տարածաշրջանում ապրող ՀՀ քաղաքացին կկարողանա օգտվել լավ ավանդույթներ և արդյունավետություն ունեցող ընտանեկան բժշկի ինստիտուտից, ապա Վայոց ձորի մարզի բնակիչ հանդիսացող ՀՀ քաղաքացին, զրկված լինելով այս արտոնությունից, ակամա դառնում է խտրական վերաբերմունք կրող, ինչի հետևանքով կոպտորեն խախտվում են մարդու իրավունքները:

Արենի համայնքի 9 բնակավայրերից 6-ը ընդգրկված են ՀՀ Կառավարության 17 նոյեմբերի 1998 թվականի թիվ 713 որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության սահմանամերձ բնակավայրերի ցանկում, որոնցից 2 բնակավայր ընդգրկված է նաև՝ ՀՀ Կառավարության 18 դեկտեմբերի 2014 թ-ի թիվ 1444-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության սահմանամերձ համայնքներին տրվող սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ համայնքների բնակավայրերի ցանկում: Արենի համայնքի բնակավայրերը մարզկենտրոն Եղեգնաձոր քաղաքից գտնվում են 6-ից 41 կմ հեռավորությունների վրա, ուստի վերջին երկու հանգամանքները հաշվի առնելով՝ առկա է իրատեսական մտավախություն, որ հայ–ադրբեջանական սահմանային լարված իրադարձությունների ֆոնին նման ռիսկային որոշումների կայացումը ոչ միայն չի ելնում ոլորտի կարգավորման շահերից, այլև էական վտանգ է ստեղծում առողջապահական տեսանկյունից բնակչության պաշտպանվածության առումով:

ՀՀ առողջապահության ոլորտում օպտիմալացում իրականացնելու մասին վերոնշյալ որոշումը կայացվել է 2019 թվականի հոկտեմբեր ամսին, երբ Հայաստանի Հանրապետությունը կանգնած չէր այսօրեական բազմաթիվ մարտահրավերների առջև (Կորոնավիրուսային հիվանդություն, Արցախյան քառասունչորսօրյա պատերազմ, Ջերմուկի սեպտեմբերյան ագրեսիա, հայ–ադրբեջանական սահմանային մի շարք այլ միջադեպեր և այլն), ուստի սա էլ ևս մի հանգամանք է, որը վկայում է նման որոշման ժամանակավրեպ լինելը և դրա կատարումը առկախելու անհրաժեշտությունը:

Ելնելով այս և  բազմաթիվ այլ հանգամանքներից, որոնք մանրամասնորեն շարադրված են Արենի համայնքի ղեկավարին հասցեագրված դիմումի մեջ, ինչպես նաև այն ռիսկից, որ բնակչության շրջանում նս նման որոշման կայացումը կարող է ոչ միանշանակ ընկալվել, հաշվի առնելով, որ առողջապահության ոլորտը յուրաքանչյուր պետության քաղաքացու պաշտպանվածության, ապահովության երաշխավորն է՝ Արենի համայնքի ավագանին ընդունում է և Հայաստանի Հանրապետության Վարչապետին և ՀՀ ԱԺ նախագահին է հղում սույն ուղերձը՝ ՀՀ Կառավարության 10.10.2019 թ.-ի թիվ 1425-Ն որոշումը վերանայելու, ոլորտում օպտիմալացում կամ բարեփոխումների իրականացումը ժամանակավորապես սառեցնելու, համապարփակ վերլուծություններ, հանրային համընդգրկուն քննարկումներ և լսումներ կազմակերպելու և նոր որոշման նախագծով հանդես գալու առաջարկով:

Աշխատակազմի քարտուղար՝ Գ. Սիմոնյան